ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

«07» մայիսի 2020թ.

# ՀՐԱՄԱՆ N 53-Ն

## ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՎԱՆԱՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 6-րդ մասի, Հայաստանի Հանրապետության առաջին փոխվարչապետի 2018 թվականի հուլիսի 31-ի № 29-Ն որոշման հավելվածի 4-րդ ու 7-րդ կետերի և 2019 թվականի հունվարի 11-ի № 3-Ն որոշման հավելվածի 37-րդ ու 43-րդ կետերի պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի 2020 թվականի մայիսի 4-ի № 02/45.7/21006-2020 համաձայնությունը (կցվում է)՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ.

1. Հաստատել Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկը՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Կոմիտեի գլխավոր քարտուղարի 2018 թվականի նոյեմբերի 15-ի «Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության քաղաքացիական ավիացիայի կոմիտեի քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկը հաստատելու մասին» № 147-Ա հրամանը:
3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Recoverable Signature

X

ՀԱՅՍԵՐ ԳԱՍՊԱՐՅԱՆ

Signed by: GASPARYAN HAYSER 2310760099

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՏԱՐՈՂ
ՀԱՅՍԵՐ ԳԱՍՊԱՐՅԱՆ